ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-005[2]-17.08.2021-ՏՀ-011/0) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ի հոդվածի «(այսուհետ՝ Օրենք)» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում «Պետական տուրքի մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 2-րդ հոդված	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ի հոդվածով նախատեսվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 44-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «44. գնահատողի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որակավորման վկայական տալու համար բազային տուրքի 100-ապատիկի չափով»: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից»: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածում սահմանված են վճարի տեսակները, որի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «1.Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ 1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝ ա. պետական տուրքը, ()»: «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը»: Այսպես՝ վերոնշյալ փոփոխությամբ		

			նախատեսվում է գնահատողի որակավորման վկայական տալու համար սահմանված բազային տուրքի 20-ապատիկի չափը փոխարինել բազային տուրքի 100-ապատիկի չափով: Առաջարկում ենք «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:		
3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ. «44. Գնահատողի որակավորման վկայական տալու համար բազային տուրքի 30-ապատիկի չափով»:	Ընդունվել է:	Ընդունվել է: